Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

334.5
О-88

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ

(ԳՅՈՒՂԿՈՈՊԻ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ

ԵՐԵՎԱՆ—1931

18.02.2014
26094

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 3740 Գլավլիտ 6642 (բ) Տիրաժ 1200

15 JAN 2010
1780

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ

(ԳՅՈՒՂԿՈՈՊԻ)

## 1. Նպատակները և անելիքները

ՀՍԽՀ-ի . . . . . . . . . շրջանի . .

. . . . . . գյուղի (կամ . . . . . . . գյուղխորհրդի գործունեության սահմանում ապրող)

. . . . . . . . կոլխոզի (գյուղատնտեսական

կոմունայի, արտելի, հողօգտագործման ընկերության) անդամները — բանվորները, բատրակները, նույնպես անհատ չքավորները, միջակները և ծառայողները լայն ինքնագործունեության հիմունքներով ու կամավոր կերպով միանում են սպառողական ընկերության (գյուղկոոպ):

1. Գյուղկոոպը, հիմք ընդունելով կուսակցության գլխավոր գիծը, իրեն նպատակ է դնում մասնակցել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աշխատանքներին, ամեն կերպ աջակցել մտնելու կոլխոզի մեջ չքավորներին ու միջակներին, ամրացնելու կոլխոզներն ու սովխոզները և համատարած կոլեկտիվացման միջոցով լիկվիդացիայի ենթարկել կուլակությանը, վորպես դասակարգի.



ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
12485-52

Գյուղկոոպն իր գործունեության շրջանում սոցիալիստական սկզբունքներով և բնակչության միջոցներով ընդարձակում է խորհրդային կոոպերատիվ առևտուրը, իր աշխատանքը դնելով դասակարգային սկզբունքի վրա, կապելով այն արտադրական պլանների կատարման, գյուղատնտեսական մթերումների և սպառողների կարիքներն ու հարցումները լավագույն կերպով բավարարելու հետ։

Գյուղկոոպը կազմակերպում է լավորակ ապրանքաշրջանառություն, իրագործելով ապրանքաշրջանառության արագացումը, ապրանքի ներմուծումն իր ժամանակին համաձայն բնակչության պահանջների և մթերումների պլանների կատարումը դարձյալ իր ժամանակին։

Գյուղկոոպն իրեն նպատակ է դնում աջակցել վերակառուցելու սոցիալիստական հիմունքներով կոլխոզնիկների, միջակների, չքավորների ու բատրակների կենցաղը։

## 2. Գյուղկոոպի գործունեությունը.—

3. Մասնանշված խնդիրները իրագործելու համար գյուղկոոպը՝

ա) Կազմում է իր գործունեության առևտրա-ֆինանսական և արտադրական տարեկան և յեռամսյակային պլանները՝ հիմք ընդունելով . . . . . .

շրջսպառկոոպմիությունից ստացված պլանային ցիֆրերն ու խնդիրները, առավելագույն չափով օգտա-



գործելով տեղական միջոցներն ու հնարավորությունները։

բ) Ընդարձակում է իր աշխատանքը կարճ ժամանակում կոոպերացման յենթարկելու բոլոր աշխատավորներին և ներգրավելու բնակչության միջոցները (փայեր, ավանդներ, կանխավճարներ և հատուկ մուծումներ)։

գ) Ապրանքներ գնելու նպատակով կնքում է պայմանագրեր, շրջսպառկոոպմիության և այլ մատակարարողների հետ իր գործունեության շրջանում, կնքում է նույնպես այլ պայմանագրեր, վոր անհրաժեշտ են գյուղկոոպի աշխատանքներն ինչպես հարկավոր է կատարելու համար։

դ) Ուսումնասիրում է իր շրջանի սպառողների պահանջները, նպատակ դնելով առավելագույն չափով հարմարեցնելու արդյունաբերության արտադրանքների տեսականավորումն ու վորակն սպառարկվող բնակչության և առանձնապես կոլխոզնիկների պահանջներին ու կարիքներին, մշակում է և պատվերներ է տալիս, շարունակ հսկում է մատակարարողներից ստացվող ապրանքների վորակի և պատվերներին համապատասխան լինելու վրա։

յե) Հետապնդում է արագացնել ապրանքաշրջանառությունը, թույլ չի տալիս ապրանքային մնացորդների ավելորդ կուտակում, իր ամբողջ աշխատանքը տանում է խիստ տնտեսման կարգապահությամբ։

զ) Ընդարձակում է խանութային ցանցը և կազմակերպում է փակ բաշխիչներ իր գործունեության շրջանում յեղող ավաններում, գյուղատնտեսական կոմունաներում և արդյունաբերական ձեռնարկություններում։

ե) Կազմակերպում է հասարակական սննդի ձեռնարկներ (ճաշարաններ, խոհանոցներ, կուլտուրական թեյարաններ, բուֆետներ) և հացաթխումը, կազմակերպում և ղեկավարում է ինքնագործունյա կոլեկտիվների (ինքնագործ ճաշարաններ, բանջարանոցներ և այլն) աշխատանքներ, նույնպես, անհրաժեշտ դեպքերում, Շրջսպառկոոպմիության համաձայնությամբ, կազմակերպում է սեփական գյուղատնտեսական ձեռնարկներ (բանջարանոցներ, կաթնատնտեսական ֆերմաներ և այլն):

ը) Կատարում է մթերումներ գյուղատնտեսական մթերքների և հումույթի, նույնպես արտահանության առարկաների, կատարում է կենսամթերքների կոնտրակտացիա թե կենտրոնացված մթերումների պաշարը բավարարելու համար, համաձայն գյուղկոոպի և շրջսպառկոոպմիության մեջ կնքված պայմանագրերի և թե այդ պայմանագրերից դուրս տեղական կարիքները — (կոլխոզնիկների, բանվորների և այլն) բավարարելու համար, ամեն կերպ աջակցելով տեղական կենսամթերքների և ապրանքային ռեսուրսների մեծանալուն:

թ) Մոբիլիզացիայի յե յենթարկում մասսաներին անցկացնելու համար համապետական, տնտեսա-քաղաքական ձեռնարկումները (ցանքի և բերքահավաքի կամպանիաներ, խորհրդների վերընտրություններ, պետական փոխառությունների տարածումը և այլն):

ժ) Աջակցում է ընդհանուր ուսուցման գործին, կազմակերպելով սնունդ դպրոցականների և ուսուցիչների համար ու կազմակերպելով կուլտ-ապրանքների վաճառք:



## 3. Գյուղկոոպների անդամների անդամության, իրավունքների և պարտականությունների մասին

4. Գյուղկոոպին կարող են անդամագրվել նրա գործունեյության շրջանում ապրող և 14 տարեկանի հասած բանվոր-բատրակները և միջակները, ծառայողները և այլ աշխատավորները և նույնպես նրանց ընտանիքի անդամները: 16 տարեկանի չհասած գյուղկոոպի անդամները, գյուղկոոպի գործունեյությանը վերաբերող հարցերը վճռելիս, օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով և չեն կարող ընտրել և ընտրվել գյուղկոոպի վարչության և վերստուգիչ հանձնաժողովի մեջ:

Գյուղկոոպին անդամ չեն կարող լինել կուլակները և խորհուրդներում ընտրելու իրավունքից զրկված այլ անձինք, նույնպես և նրանցից նյութապես կախում ունեցող նրանց ընտանիքի անչափահաս (մինչև 18 տարեկան) անդամները: Այս օրենքից բացառություն կազմում են.

ա) Այն ընտանիքների անդամները, վորոնց կազմի մեջ կան խորհրդային իշխանությանը նվիրված կարմիր պարտիզաններ, կարմիր բանակայիններ, կարմիր նավատորմիղայիններ (շարքային և հրամանատարական կազմ), գյուղական ուսուցիչներ և ուսուցչուհիներ ու գյուղատնտեսներ, սակայն պայմանով, յեթե նրանք կերաշխավորեն իրենց ընտանիքի անդամների համար:

բ) Այն նախկին մանր առևտրականները, արհեստավորները և տնայնագործները, վորոնք իրենց նախկին զբաղմունքի հետևանքով զրկված են խորհուրդնե-

քում ընտրելու իրավունքից, յեթե նրանք կընդունվեն գյուղատնտեսական կամ արհեստագործական կոոպե-րատիվ կազմակերպությունների մեջ, համաձայն այն դաշնակից հանրապետության օրենսդրության, վորի սահմաններում գտնվում է գյուղկոոպը: Սակայն «ա» և «բ» կետերում նշված անձինք չեն կարող ընտրել և ընտրվել վորպես անդամ Գյուղկոոպի ընտրովի կազ-մերի մեջ:

Այն ոտարահպատակները, վորոնք աշխատանք տա-նելու համար ապրում են ԽՍՀՄ-ում, բայց խորհուրդ-ներում ընտրելու իրավունք չունեն, գյուղկոոպին ան-դամ լինելու իրավունք ունեն, բայց չեն կարող ընտըր-վել վորպես անդամ գյուղկոոպի ընտրովի կազմերի մեջ:

5. Գյուղկոոպի անդամի ընդունելությունը կատա-րում է նույն գյուղկոոպի վարչությունը:

Գյուղկոոպին յուրաքանչյուր անդամագրվող մու-ծում է մուտքի վճար մեկ ռուբլու չափով և անդամա-վճար՝ համաձայն իր սոցիալական և գույքային դրու-թյան, վորի չափը և մուծման ժամկետները սահման-ված են աշխատավոր բնակչության համապատասխան կատեգորիայի համար:

Գյուղկոոպի յուրաքանչյուր անդամ նույն գյուղ-կոոպի պարտքերի նկատմամբ կրում է իր վրա պատաս-խանատվություն իր մուծելիք փայավճարի լրիվ չա-փով (թեկուզ հիշյալ պարտքերը ծագած լինեն մինչև նրա անդամ ընդունվելը):

Գյուղկոոպի անդամի պարտքի հատուցումը չի կա-րող տարածվել նրա Գյուղկոոպում ունեցած փայավ-ճարի վրա:



6. Գյուղկոոպի անդամին, վոչ անդամի նկատմամբ տրվում է առավելություն ապրանքները, ինչպես և գյուղկոոպի արտադրական ձեռնարկների արտադրանք-ները վաճառելու ժամանակ:

7. Գյուղկոոպի յուրաքանչյուր անդամ կարող է դուրս գալ անդամությունից, տալով այդ մասին դի-մում գյուղկոոպի վարչությանը:

Այն անդամները, վորոնք չեն կատարում իրենց պարտականությունները գյուղկոոպի հանդեպ, խախ-տում են գյուղկոոպի վորոշումները կամ գործում են ի վնաս սոցիալիստական վերակառուցման շահերին, այդպիսիները գյուղկոոպի վարչության վորոշումով հեռացվում են գյուղկոոպի անդամությունից:

Գյուղկոոպի կազմից անպայմանորեն հեռացվում են այն անձնավորությունները, վորոնք կուլակության աջակցելու և վնասարարության պատճառով հեռացվում են կոլխոզներից, նույնպես և այն անձնավորություն-ները, վորոնք նույն պատճառներով հեռացվում են ձեռնարկների ու հիմնարկների աշխատանքներից:

8. Գյուղկոոպում անդամ ընդունելու մերժման և գյուղկոոպի կազմից հեռացնելու դեպքում կարելի յե բողոքել գյուղկոոպի անդամների ընդհանուր ժողովին (պատգամավորների համագումարին) կամ . . . . Շրջսպառկոոպմիության վարչությանը, վորոնց վճիռները լինելու յեն վերջնական:

9. Գյուղկոոպի անդամների պատասխանատվու-թյան կարգը գյուղկոոպի պարտքերի նկատմամբ, նը-րանց փայերի վերադարձնելը կամ ժառանգներին հանձ-նելը, նույնպես անդամի բնակության վայրը փոխելու հետեվանքով փայի, մեկ սպառողական կոոպերատի-

վից մյուսը փոխադրելու կարգը, սահմանվում ե ԽՍՀՄ և ՌՍՖԽՀ Ցենտրոսայուզի հրատարակած հրահանգներով:

## 4. Գյուղկոոպի միջոցների մասին

10. Գյուղկոոպի միջոցները կազմվում են այն գումարից, վոր նա ստացել ե վորպես սեփականություն իր կազմակերպման ժամանակ, մուտքի վճարներից և փայավճարներից, վաստակի հատկացումներից, փոխառու միջոցներից (ավանդներ, կանխավճարներ, նպատակային մուծումներ, միջոցներ ստացված՝ պետական, պրոֆմիութենական և այլ հիմնարկներից, կազմակերպություններից և ձեռնարկներից) և զանազան անվերադարձ մուծումներից:

Այդ միջոցները բաժանվում են՝

ա) հիմնական, բ) փայերի, գ) պահեստի, և դ) հատուկ դրամագլուխների:

Այդ դրամագլուխների գոյացման և ոգտագործման կարգը սահմանվում ե գոյություն ունեցող որենսդրությամբ և ԽՍՀՄ ու ՌՍՖԽՀ Ցենտրոսայուզի հրատարակած հրահանգներով:

11. Գյուղկոոպի ստացած վաստակից, համաձայն որենքով սահմանված և սպառողական կոոպերացիայի ղեկավար մարմինների վորոշումների, կատարվում են հատկացումներ, իսկ վաստակի մնացյալ մասը հատկացվում ե ընդարձակելու գյուղկոոպի գործունեությունը:

Վաստակի բաշխումը (ըստ փայերի, ըստ ապրանքների գնման կամ ըստ այլ ցուցանիշների) գյուղկոոպի անդամների մեջ չի թույլատրվում:



## 5. Գյուղկոոպի գործերի կառավարման մասին

12. Գյուղկոոպի գործերը կառավարում են անդամների ընդհանուր ժողովը և վարչությունը: Պատգամավորները յուրաքանչյուր համագումարի համար ընտրվում են կոոպ. անդամների ժողովներում:

Ընդհանուր ժողովների հրավիրելու կարգը և նրանց փոխարինումը պատգամավորների համագումարներով վորոշվում ե սպառողական կոոպերացիայի վերադաս կազմակերպությունների հրահանգներով:

13. Ընդհանուր ժողովը (պատգամավորների համագումարը) հանդիսանում ե գյուղկոոպի կառավարող բարձրագույն մարմինը, նա վճռում ե գյուղկոոպի գործունեության կարևոր հարցերը, ընտրում ե գյուղկոոպի համար վարչություն և վերստուգիչ հանձնաժողով, և նույնպես ներկայացուցիչներ Շրջսպառկոոպմիության պատգամավորների համագումարի համար, հաստատում ե գյուղկոոպի պլանները, հաշվետվությունները և նախահաշիվները, սահմանում ե գյուղկոոպի վաստակի բաշխման և վնասների ծածկման կարգը: Ընդհանուր ժողովների հրավիրելը (պատգամավորների համագումարը) տեղի յե ունենում վոչ պակաս մեկ անգամից յեռամսյակում:

Ընդհանուր ժողովը (պատգամավորների համագումարը) իրավասու յե, յեթե ներկա յե գյուղկոոպի անդամների ընդհանուր թվի կեսից վոչ պակաս մասը: Յեթե չներկայանան գյուղկոոպի անդամների (պատգամավորների) այդ քանակը, յերկրորդ անգամ հրավիրված ժողովը իրավասու յե, վորքան ել ներկա լինեն անդամներ:

Ընդհանուր ժողովի (պատգամավորների) որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկության կարգով:

14. Գյուղկոոպի վարչությունն ընտրվում է մեկ տարի ժամանակով . . . . . հոգու կազմով,

հանդիսանում է գյուղկոոպի գործադիր մարմինը, ղեկավարում է նրա բոլոր գործերը և կրում է պատասխանատվություն գյուղկոոպի բոլոր աշխատանքների համար:

Վարչությունն իր միջից ընտրում է նախագահ, գյուղկոոպի աշխատանքների ղեկավարման պարտականությունները, միանձնյա ղեկավարության հիմունքներով, բաժանում է իր անդամների մեջ և յուրաքանչյուրի վրա դնում է նրանց հանձնված պարտականությունների կատարման պատասխանատվությունը, վերապահելով նրանց անհրաժեշտ իրավունքներ:

Վարչության նիստերը կատարվում են դռնբաց, որոնց իրավունք է տրվում մասնակցելու կոոպակտիվին և գյուղկոոպի մնացյալ անդամներին:

Գյուղկոոպի վարչությունը պարտավոր է պահելու հաշվապահություն և հաշվետվությունը համաձայն ԽՍՀՄ և ՌՍՖԽՀ Ցենտրոսոյուզի կողմից սահմանված ձևերի և կանոնների:

Իրենց պարտականությունները խախտող գյուղկոոպի վարչության անդամները գյուղկոոպին պատճառած վնասները կրում են միասին:



## Ե. Հասարակական հսկողության և կոոպերատիվ ակտիվի աշխատանքների մասին

15. Հասարակական հսկողությունը գյուղկոոպի աշխատանքների վերաբերմամբ իրագործում է վերստուգիչ հանձնաժողովը, որն ընտրվում է մեկ տարի ժամանակով . . . . . հոգու կազմով:

Իրենց պարտականությունները խախտող վերստուգիչ հանձնաժողովի անդամները գյուղկոոպին պատճառած վնասները կրում են միասին:

16. Մասսայական հսկողությունը գյուղկոոպի առանձին ձեռնարկների վերաբերմամբ իրագործում է կոոպերատիվ բյուրոն (կոոպբյուրոն), և նրա կողմից կազմակերպված աջակցող և հսկող խմբակները, գործելով համաձայն ԽՍՀՄ և ՌՍՖԽՀ Ցենտրոսոյուզի հատուկ այդ առթիվ հրատարակած կանոնների:

17. Գյուղկոոպի վարչության և մյուս ընտրովի մարմինների բոլոր անդամներն իրենց ընտրողների կողմից կարող են ժամանակից առաջ հետ կանչվել, եթե հաստատվի նրանց անգործունեությունը, անտնտեսավարությունը կամ նրանց արարքները, ի վնաս սոցիալիստական վերակառուցմանը:

## Զ. Գյուղկոոպի և սպառողական կոոպերացիայի վերադաս կազմակերպությունների փոխհարաբերությունները

18. Գյուղկոոպը հանդիսանում է սպառողական կոոպերատիվների . . . . . . . . շրջանային Սպառկոոպի Միության անդամ է օգտվում է

իրավական անձի իրավունքներով: Պլանային խնդիրները, լիմիտները և դիրեկտիվ ցուցմունքները, վոր դրվում են Շրջսպառկոոպմիության և սպառողական կոոպերատիվների վերադաս կազմակերպությունների կողմից և նույնպես նրանց ու նրանց կից միավորումների կողմից կնքված պայմանագրերը այլ կազմակերպությունների հետ, պայմանագրերի այն մասը, վոր վերաբերվում է գյուղկոոպներին, հանդիսանում են պարտադիր գյուղկոոպի համար:

Տրված դիրեկտիվները, խնդիրները և լիմիտները խախտելու համար Շրջսպառկոոպմիությունը, և նույնպես վերադաս կոոպերատիվ կազմակերպությունները իրավունք ունեն գյուղկոոպի բոլոր աշխատակիցների — այդ թվում նաև ընտրովիների նկատմամբ սահմանել կարգապահական պատիժներ, հասցնելով այդ մինչև պարտականություններից զրկելը, իսկ անհրաժեշտ դեպքում հանձնել նրանց քրեական պատասխանատվության, և գյուղկոոպի նկատմամբ գործադրել տնտեսական, մասնավորապես վարկային ներգործումներ:

## 8. Գյուղկոոպի գործունեյության դադարեցումը

19. Գյուղկոոպի գործունեյության դադարեցումը (նրա գործերի լիկվիդացիայով կամ առանց լիկվիդացիայի) կատարվում է համաձայն այս հարցի վերաբերյալ գոյություն ունեցող որենքների:

«Հայկոոպ»
25-ին հունիսի 1931 թ.
Ք. Յերեվան.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան
NL0208009

403